ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2021թ. N ------- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 3-րդ մասով և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը. Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 10 որոշման.

1. N 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի» գլխի 1-ին կետը լրացնել 8.1-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.

«8.1) քաղաքաշինության, հողօգտագործման և կոմունալ տնտեսության կառավարման բաժին».

2) ուժը կորցրած ճանաչել որոշման N1 հավելվածի «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի» գլխի 1-ին կետի 5-րդ և 8-րդ ենթակետերը.

2. N 2 հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.6-րդ կետը լրացնել նոր տողերով՝ հետևյալ բովանդակությամբ.

-	**Քաղաքաշինության, հողօգտագործման և կոմունալ տնտեսության կառավարման բաժին**				
1	բաժնի պետ	1	291000		291000
2	բաժնի պետի տեղակալ	2	250000		500000
3	գլխավոր մասնագետ	6	225000		1350000
4	առաջատար մասնագետ	15	219000		3285000
5	առաջին կարգի մասնագետ	9	207000		1863000
	ԸՆԴԱՄԵՆԸ	33			7289000

2) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի 2.6-րդ կետում ««Ամբողջը» տողի «185» և «39622000» թվերը համապատասխանաբար փոխարինել «183» և ««39130000» թվերով:

3) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ վարչական շրջաններ» տողի «1285» և «277782000» թվերը համապատասխանաբար փոխարինել «1283» և «277290000»թվերով.

4) Ուժը կորցրած ճանաչել «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ» գլխի «Կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժին» և «Քաղաքաշինության և հողօգտագործման բաժին» տողերը.

5) «II. Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Ընդամենը՝ առանձնացված ստորաբաժանումներ» տողում «1539» և «322210800» թվերը փոխարինել համապատասխանաբար «1537» և « 321718800» թվերով.

6) «Ամբողջը» տողում «2133,5» և «463727350» թվերը փոխարինել «2131,5» և « 463235350» թվերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք-Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի /այսուհետև՝ նախագիծ/ ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի /այսուհետ՝ աշխատակազմ/ կառուցվածքի օպտիմալացման գործընթացի առաջին փուլի շրջանակներում աշխատակազմի կողմից կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում Նախագծով առաջարկվում է վերակազմակերպել աշխատակազմի «Կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման» և «Քաղաքաշինության և հողօգտագործման» բաժինները և ստեղծել մեկ նոր բաժին՝ «Քաղաքաշինության, հողօգտագործման և կոմունալ տնտեսության կառավարման» անվանումով:

Ուսումնասիրությունները և վերլուծությունները կատարելիս հաշվի են առնվել քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտների փոխկապակցվածությունը և այդ բնագավառներում «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 94-րդ հոդվածում Երևանի վարչական շրջանների ղեկավարներին վերապահված լիազորությունների համատեղված լինելը, ինչպես նաև տնտեսական բաղադրիչը՝ համաձայն որի աշխատավարձի ֆոնդի տարեկան տնտեսումը կազմելու է 5904000 ՀՀ դրամ:

Աշխատակազմի վերը նշված երկու վերակազմակերպվող բաժինների գործառույթները շատ հաճախ համադրվել են տարբեր խնդիրների լուծման շուրջ, ինչի արդյունքում հաճախ դժվարացել է քաղաքացիների դիմումների և/կամ իրավաբանական անձանց գրությունների, բողոքների համակողմանի ուսումնասիրությունը, օպերատիվ արձագանքը, մատուցվող ծառայությունների որակը և ժամկետները, ինչպես նաև գործառույթների կրկնությունը և աշխատակիցների ոչ բավարար իրազեկվածությունը առաջացրել են խնդիրներ համայնքային ծրագրերի իրականացման աշխատանքների կազմակերպման, ապօրինի հողօգտագործման և ինքնակամ շինությունների նկատմամբ հսկողության իրականացման և կանխարգելման ուղղությամբ:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտներում իրականացվող գործառույթները մեկ բաժնում մեկտեղելու արդյունքում հեռանկարային ծրագրերի կազմման, պլանավորման և դրանց հստակ ժամկետներում իրականացման տեսանկյունից համակարգային բարեփոխումների են ենթարկվելու բաժնի գործունեության կազմակերպման ռազմավարությունը: Միաժամանակ նոր որակի համագործակցություն է իրականացվելու կենսաապահովման ոլորտի ծառայություն մատուցող ընկերությունների հետ, այդ թվում Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ ստեղծված «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն», «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**